ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը – Արթուր Մելիքյան.

2. Զբաղեցրած պաշտոնը - Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի անասնաբուժության վարչության պետի տեղակալ.

3. Գործուղման վայրը և ժամկետները – Սերբիայի Հանրապետության մայրաքաղաք Բելգրադ, 2025 թվականի սեպտեմբերի 22-26-ը ներառյալ.

4. Հրավիրող կողմը – Եվրոպական GF-TADs կազմակերպության գրասենյակ .

5. Գործուղման նպատակը – Եվրոպայի տարածաշրջանում կենդանիների անդրսահմանային առաջնահերթ հիվանդությունների հարցերով փորձագիտական մշտական խմբերի GF TADs տարածաշրջանային 1 ին համաժողով.

6. Քննարկված թեմաները (հարցերը) – Դաբաղ, խոզերի աֆրիկյան ժանտախտ, մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ, կատաղություն, հանգուցային մաշկաբորբ և թռչնագրիպ հիվանդությունների անասնահամաճարակային իրավիճակը մասնակից երկներում, հիվանդության ներթափանցման կանխմանը ուղղված միջոցառումների ներյակացում, հիվանդության բռնկման դեպքում պայքարի միջոցառումները:

7. Հանդիպումները, ելույթները – Մասնակից երկրների (Վրաստան, Մոլդովա, ՈՒկրաինա, Ադրբեջան, ԵՄ և Բալկանյան երկրներ) կողմից ներկայացվեցին ելույթներ անդրսահմանային առաջնահերթ հիվանդությունների՝ դաբաղ, խոզերի աֆրիկյան ժանտախտ, մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ, կատաղություն, հանգուցային մաշկաբորբ և թռչնագրիպ հիվանդությունների անասնահամաճարակային իրավիճակը, հիվանդության ներթափանցման կանխմանը ուղղված միջոցառումների և հիվանդության բռնկման դեպքում պայքարի միջոցառումների ներյակացում:

Մասնակից երկրներում, որպես հիվանդության ներթափանցման կանխմանը ուղղված միջոցառումներ իրականացվում են՝ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը ուղղված, վայրի կենդանիների դիակների հավաքում և ոչնչացում, մոնիթորինգ, արագ արձագանքում,

հակաանասնահամաճարակային միջոցառումներ, անասնահամաճարակային քարտեզագրում, ծանուցում:

Միաժամանակ իրականացվում է հիվանդության կարխարգելմանը ուղղված վարժանքներ այդ թվում միջազգային կառույցների օժանդակությամբ:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

- Համաժողովի ընթացքում ԿԱՀԿ-ի տարածաշրջանի ղեկավար պարոն Բուդիմիր Պլավշիչի օժանդակությամբ կայացավ հանդիպում Սերբիայի Հանրապետության մայրաքաղաք Բելգրադում գտնվող անասնաբուժության ոլորտի լաբորատորիայի ղեկավար պարոն Միշո Կորոլևիչի հետ, որի ընթացքում քննարկվեց մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդության հայտնաբերմանն ուղղված ՀՀ ՍԱՏՄ «ՀԱԲԼԾԿ» ՊՈԱԿ-ին լաբորատոր թեստերի օժանդակության հարցը, որը կօգտագործվի ԿԱՀԿ-ով ՀՀ-ն մանր եղջերավոր կենդանիների ժանտախտ հիվանդությունով ազատ ճանաչման գործընթացում:

ԿԱՀԿ-ի տարածաշրջանային գրասենյակի ներկայացուցիչ Դիմիտրի Մառոզովի հետ քննարկվեց ՀՀ-ում իրականացնել անասնաբույժների մասնագիտական կարողությունների բարձրացմանը ուղղված ուսուցում:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Գործուղվող՝ Արթուր Մելիքյան

30.09.2025 թ.